«Այգեկի Մ.Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ

ԽՄԲԱԿ

«Բառերի խորհրդավոր աշխարհում»

Խմբակի ղեկավար՝ Վ. Դալլաքյան

Հայոց լեզվի խմբակը կոչված է արտաուսումնական պարապմունքների միջոցով ամրապնդել, խորացնել, զարգացնել աշակերտների լեզվաբանական գիտելիքները , ընդլայնել մտահորիզոնը :

Լեզվական գիտելիքները թույլ են տալիս հաղորդակցվել մարդկային հոգևոր մշակույթին և գրականությանը, նպաստել սոցիալական անհատի ձևավորմանը :

Դպրոցում կարևորվում է լեզվական մշակույթի մակարդակի բարձրացումը, աշակերտների ուղղախոսությունը, ուղղագրությունը, գրավոր և բանավոր կապակցված խոսքի կառուցումը, բառապաշարի հարստացումը ապահովող կարողությունների և հմտությունների զարգացումը:

Խմբակի պլանը բխում է հանրակրթական դպրոցի հայոց լեզվի ծրագրից: Այն լրացուցիչ լեզվական գիտելիքներ է տալիս՝ իր առջև դնելով ուսումնադաստիարակչական խնդիրներ, նպաստում է աշակերտների մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացմանը և հնարավորություն տալիս ձևավորելու ճանաչողական, տեղեկատվական և հաղորդակցական կարողունակություններ:

Նպատակը.

- ընդլայնել և խորացնել աշակերտների մտահորիզոնը,
- հետաքրքրություն արթնացնել մայրենի լեզվի, նրա տարբեր դրսևորումների նկատմամբ,
- ապահովել նրա հիմնավոր տիրապետումը,
- սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ,
- հարստացնել բառապաշարը,
- նպաստել աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացմանը,
- սովորեցնել օգտվել տարբեր բառարաններից:

Խնդիրները.

- հետաքրքրել աշակերտներին լեզվական բազմազան իրողություններով,
- բացահայտել բառերի իմաստը , նշանակությունը, ստուգաբանությունը,
- նպաստել աշակերտների լեզվական մշակույթի մակարդակի բարձրացմանը,
- ամրապնդել գործնական հմտությունները՝ կառուցելու ճիշտ և գեղեցիկ խոսք՝ գրավոր և բանավոր,
- ցույց տալ աշակերտներին, որ լեզուն միայն խրթին ու տաղտկալի կանոնների շարան չէ, այլ մի հետաքրքիր ու խորհրդավոր աշխարհ,
- դաստիարակել զարգացած, բանիմաց, հարուստ բառապաշարով անհատներ,
- դաստիարակել հասարակության մեջ ազատ և անկաշկանդ արտահայտվելու և ինքնադրսևորվելու կարողություն,
- զարգացնել աշակերտների ստեղծագործական ունակությունները:

Վերջնարդյունքները.

- կհետաքրքրվեն լեզվի զարգացման պատմությամբ,
- կամրապնդեն և կխորացնեն ուղղախոսական, ուղղագրական, բառագիտական և անցած այլ լեզվական գիտելիքները,
- կսովորեն բառերի, բառակապակցությունների, դարձվածքների, շրջասույթների առաջացումն ու ստուգաբանությունը,
- կկարողանան սովորածը կիրառել գրավոր և բանավոր խոսքում,
- կկարողանան կազմել ճիշտ և գեղեցիկ խոսք,
- կընթերցեն նյութեր՝ տրված թեմաների վերաբերյալ,
- կկարողանան ստեղծել սահիկաշարեր՝ նյութերին համապատասխան:

Ժամ	Թեման	Առաջադրանք
1.	Լեզուն որպես հաղորդակցման միջոց (մուտք)	
2.	Առածներ և ասացվածքներ լեզվի մասին	
3.	Հայ գրողները հայոց լեզվի մասին	
4.	Օտար գրողները հայոց լեզվի մասին	
5.	Բանաստեղծություններ՝ նվիրված մայրենի լեզվին	
6.	Ստեղծել սահիկաշար	
7.	Բառերի աշխարհը	էջ 5 (ՍԱ)
8.	Ամենակարճ բառերը: Ինչու են նոր բառերը երկար	էջ 11-13 (ՍԱ)
9.	Բառ և բառի քերականական ձև	էջ 32 (ՍԱ)
10.	Բառ և բառակապակցություն	էջ 23 (ՍԱ)
11.	Բառը մի աշխարհ է: Բառերի <<կենսագրությունը>>	էջ 3 (ՊԲ)
12.	Ձիու քայլքն ու քուրմի ոտքը: Նորին մեծություն... Ախոռապետը	էջ 31 (ՊԲ) էջ 45 (ՊԲ)
13.	Մի մարկիզի հետնորդները: << Օ, կիները, կիները...>>	էջ 93 (ՊԲ) էջ 61 (ՊԲ)
14.	Արծաթն ու արևը: Որն է կենտրոնը	էջ 58 (ՊԲ) էջ 32 (ՊԲ)

15.	Բոլոր աստվածների կացարանը	էջ 102 (ՊԲ)
16.	Այծամարդը և նրա սերունդները:	էջ 107 (ՊԲ)
17	Կյանքի թելը կտրվել: Ընթերցումներ հունական առասպելներից	էջ 28 (ՊԲ)
18.	Սպիտակ և սև խիճերը: Անարգանքի սյունին գամել	էջ 231(ՊԲ) էջ 174 (ՊԲ)
19.	Վահանով: Ինչ ասենք այն կույր կնոջը	էջ 78 (ՊԲ) էջ 79 (ՊԲ)
20.	Խելքը շուկայում չե՞ն ծախում: Գիրկն ընկնել	էջ 109 (ՊԲ) էջ 120 (ՊԲ)
21.	<<Չեմ հասկանում>>... կենդանին	էջ 260 (ՊԲ)
22.	Ճանաչենք I հայացքից: Ծառ—պարտեզ—դրախտ—եդեմ	էջ 270 (ՊԲ) էջ 277 (ՊԲ)
23.	Անվանակոչում	էջ 248 (ՊԲ)
24.	Մարդկանց անունները	էջ 253 (ՊԲ)
25.	Մեր ամսանունները	էջ 141
26.	Մեր ամսանունները	էջ 141 (ՊԲ)
27.	Շաբաթը և նրա օրերը	էջ 169 (ՊԲ)
28.	Հին հայկական ամսանունները, օրանունները, ժամանունները:	Հանրագիտակ
29.	Ընթերցումներ հայկական առասպելներից	
30.	Ինչպե՞ս են առաջացել հայերեն անունները	էջ 19 (ՊԲ)

31.	Ի՞նչ է նշանակում քո անունը	էջ 180 (ՊԲ)
32.	Ամփոփում. գործնական աշխատանք	
33.	Գլուխ բերել: Աստված -կառքը	էջ 14 (ՊԲ) էջ 55 (ՊԲ)
34.	Ընթերցումներ հուն. առասպելներից	
35.	Ինչու ցերեկը ճրագով ման գաս	էջ 54 (ՊԲ)
36.	Ճեմարան,ակադեմիա:	Մանկական հանրագիտարան
37.	Ասա՝ ում հետ ես հաց կերել	էջ 183 (ՊԲ)
38.	Ի՞նչ արժե կրակը: Ինչ գույնի է ոսկին	էջ 83 (ՊԲ) էջ 90 (ՊԲ)
39.	Արադանից մինչև Գոբի անապատը	էջ 85 (ՊԲ)
40.	Ով ինչպես է մեռնում	էջ 99 (ՊԲ)
41.	Դեկան էլ կա, դեկան էլ: Ով է աքլորանում	էջ 112 (ՊԲ) էջ 216 (ՊԲ)
42.	Քնաբեր ... գետը: ...Եվ քնաբեր» ծաղիկը	էջ 124 (ՊԲ) էջ 127 (ՊԲ)
43.	Ընտանիք...: ...Եվ սեր	էջ 184 (ՊԲ) էջ 190 (ՊԲ)
44.	Խորհրդավոր թվեր	էջ 195 (ՊԲ)
45.	Կարելի՞ է հիմնարկը ջրիկ դարձնել	էջ 281(ՊԲ)
46.	Տոն: Նոր տարի,Ամանոր,Նավասարդ	էջ 282 (ՊԲ)

47.	Թնավոր խոսքեր։Առյուծի բաժին	Էջ 107 (ՎՍ)
48.	Սոդոմ- Գոմոր։ Սպիտակ ագռավ	Էջ141(ՎՍ) Էջ 142 (ՎՍ)
49.	Ես գիտեմ այն, որ ոչինչ չգիտեմ Հաղթողներին չեն դատում	Էջ 117 (ՎՍ) Էջ 127 (ՎՍ)
50.	Ավետյաց երկիր։ Աստծո գառ	Էջ 208 (ՎՍ) Էջ 109 (ՎՍ)
51.	Ավգյան ախոռներ։ Աքիլլեսյան գարշապար	Էջ 108 (ՎՍ) Էջ 110 (ՎՍ)
52.	Դամոկլյան սուր։ Գորդյան հանգույց	Էջ114 (ՎՍ) Էջ 114 (ՎՍ)
53.	Դրակոնյան օրենքներ։ Դիոգենեսի տակառ	Էջ 116 (ՎՍ) Էջ 115 (ՎՍ)
54.	Եվ դու՞, Բրուտոս։ Բարդուղիմեոսյան գիշեր	Էջ 118 (ՎՍ) Էջ112 (ՎՍ)
55.	Դանայան տակառ։ Կռվախնձոր	Էջ 115 (ՎՍ) Էջ 126 (ՎՍ)
56.	Ընթերցումներ հուն. առասպելներից	
57.	Քավության նոխազ։ Հուդայի համբույր	Էջ 145 (ՎՍ) Էջ 129 (ՎՍ)
58.	Ռուբիկոնն անցնել։ Նավերն այրել	Էջ 140 (ՎՍ) Էջ 132 (ՎՍ)
59.	Հերոստրատյան հռչակ։	Էջ 128 (ՎՍ)

	Ոդիսական	էջ135 (ՎՍ)
60.	Ընթերցումներ հուն.առասպելներից	
61.	Սֆինքս։ Նարցիս։ Մեկենաս	էջ 143 (ՎՍ) էջ 133 (ՎՍ) էջ 131 (ՎՍ)
62.	Սիզիֆյան աշխատանք։ Օրփեոս	էջ 141 (ՎՍ) էջ 147 (ՎՍ)
63.	Ձեռքերը լվանալ։ Ձայն բարբառո հանապատի	էջ 130 (ՎՍ) էջ 129 (ՎՍ)
64.	Բաժանիր, որ տիրես։ Պետությունը ես եմ	էջ112 (ՎՍ) էջ 138 (ՎՍ)
65.	Արգելված պտուղ։ Երկնային մանանա	էջ 110 (ՎՍ) էջ 119 (ՎՍ)
66.	Ընթերցումներ Աստվածաշնչից	
67.	Գործնական աշխատանք/տեսաշար/	
68.	Ամփոփում	

Գրականություն

1. Ս.Աբրահամյան, Բառ և խոսք, Երևան,1978:
2. Պ.Բեդիրյան, Բառերի խորհրդավոր աշխարհից, Երևան,1989:
3. Լ.Հախվերդյան, Զրույցներ լեզվի մասին, Երևան,1982:
4. Վ.Սահակյան,Թևավոր խոսքեր, Երևան,2005:
5. Մ.Խորենացի,Հայոց պատմություն, Երևան, 2009:
6. Կուն,Հին հունական լեգենդներն ու առասպելները,Երևան,1989:
7. Հր.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան,Երևան,1942-1962:
8. Հ. Խաչատրյան, Հանրագիտակ, Երևան,1989: